

ՀԱՆԴԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՐԿԱՅԻ ԴԻՏՈՒՂԻՐ

Պարկայք դիցուհիք էին, յորս կը հաւատար հին Հեթանոսութիւնն իբրեւ տէրս կենաց և մահու մարդկան, և որք ամենքէն աւելի բաղարձակ կարողութիւն մ'ունէին: Տիրուհիք մարդկան բաղդի, կը սահմանէին անոնց վախճանք: Ինչ որ կը պատահէր յաշխարհի՝ անոնց իշխանութեան տակն էր, և այս կարողութիւնս ոչ եթէ զմեր օրերը մանեյն էր միայն, այլ և երկնային գնտից շարժումն և աշխարհի էացուցիչ տարեբաց միաձայնութիւնը հաւասարապէս անոնց պետութեան տակն էր: Երեք քորք էին. Կողառով, Լաքեւիս և Արարուհու: Դիցաբանք ոչ ասոնց անուանց վրայ և ոչ ծագմանն միաբան են 'ի կարծիս: Եսիողոս նախ, յետ ծնուցանելոյ զանոնք 'ի Գիշերոյ, առանց նպաստից աստուծոյ ուրուք, իբրև թէ ցուցնելու մեզի մեր բաղդին անթափանցիկ մթութիւնը, ապա ասոր հակառակ կը զուրցէ Ապողոդորի հետ թէ յԱրարազգայ և 'ի Թեմիսայ ծնան: Որփէոս՝ անոնց վրայ գրած երգին մէջ կը կոչէ զանոնք զստեքը երեքոսի. և լիկսփրոն կ'ըսէ թէ ծնան 'ի Ծովէ և 'ի Դիոսէ՝ 'ի տեառնէն աստուածոց: Սիրեցեալք 'ի սմանէ, որ տուաւ անոնց շատ առանձնաշնորհութիւններ, օգնեցին իրեն յաջողութեամբ, հակայից պատերազմին մէջ, և Աղբիտ և Թատն մեռան անոնց հարուածոց տակ: Ուրիշ մը զանոնք Հարկին և Բաղդի զըստեքը կ'ըսէ: Կրկնորոն, յետ ֆուխսիպլաւայ, կը համարի թէ ասոնք էին այն

աննուէր Հարկն որ զմեզ կը վարէ. և Լուկիանոս իր Բանակցութեան գրոց շատ տեղերը կը շփոթէ զանոնք ընդ Բաղդին, Գալով իրենց թուոյն, է նոյն զանազանութիւն կարծեաց: Հին մատենագիրք կը խառնեն անոնց հետ Օփիս, Վասն զի, կ'ըսէ Լիլիոյ ժիռալտի, այս անունս յարաբերութիւն մ'ունի ընդ խորհրդաւոր քողոյն որ կը ծածկէ զմեր վախճանն (1): Նեմեսիս և Ալլաւառեւ սոյն այս աստուածուհեաց կարգը կը դասուին, եթէ հաւատաւոր փորձուստի որ այսպէս կ'որոշէ զանոնք. առաջինը կ'ուղղէր զանիւրաւութիւնս Բաղդին, և երկրորդն էր իբրև պաշտօնեայ երկնային վրէժխնդրութեանց և արդար մարդկան հատուցմանց: Պաւսանիաս կը յիշէ երեք ուրիշ բոլորովին օտար Պարկայք: Աստղիկ-Սլաւնիս, ամենէն հինն, Բաղդին և իլիքիս, զոր Պինդար միայն իբրև անոնց ընկեր կը ներկայացընէ: Նաև Պերոսփոնէ կամ Ստիքիսն ի Հելաս է 'ի թուոյ Պարկայից: Երբմէնս ըստ հաւատարիմ մատենագրաց նախնեաց, սա յաճախ կը մրցի Արարուհու հետ մեր բաղդից թեյն կտրելու պաշտօնին համար, վասն զի կարիքի չէր մեռնել՝ թէ որ չկտրէր զաղիտաւոր մաղն որ զմեզ կը միացընէ կենաց հետ: Դիցաբանք ոչ ինչ նուազ կը զանազանին բառին բնիկ նշանակութեան վրայ: Վար-

(1) Ի Լատին բայէ Operio, որ կը նշանակէ ծածկել:



ՊԱՐԿԱՅԻ ԴԻՅՈՒՆԻՔ. — զԱՍԿԵՐ ՄԻՔԵԼԱՆՃԵԼՈՅԻ.

րոն Պարկայից ընդհանուր անունն յառաջ կը բերէ 'ի իմունզիոն (parta կամ partus) բառէն, որովհետեւ այս աստուածուհիք խնամակալ էին ծննդեան մարդկան, Ըստ Սերպիտի, այս բառս է իբրեւ հակադիր իմն իմայել (parcere) բային, վասն զի ոչ ումբ կը ներեն, որք ոչ ումեք խնայեմ: Բազումք կը մեկնեն զայս յետին նշանակութիւնն այս իմաստով թէ նորա ազահ են մեր աւուրց (բաղդին), և թէ չեն շնորհեր զայնս քան զչափն տահմանեալ 'ի ճակատագրէն: Սգայիճէր աւելի նուրբ քան թէ հաստատուն բացայայտութիւն մը կ'ընէ. « Պարկայց անունն կը ծագի աստի՛ որ անոնք կը խնայեն կենաց մարդոյ մինչև որ իւր ճակատագիրն լրանայ »: Լը Գլէրգ ասոր սկիզբն փնտրուց 'ի ֆաղդէականն շարագ ԲՊԾ, խորտակել, բաժանել. և այլք յառաջ բերեն porca ալօս կամ պատառաճ լատին բառէն: Պաշտօնն զոր կ'ընծայէին ասոնց 'ի Լատիոն և անունս Մայրք՝ զոր կը կրէին 'ի Գաղղիա, ծանրութիւն մը կու տան այս բացատրութեանս: Արդարեւ կը կարծէին թէ Պարկայք վերակացոյց էին ծննդոց գիւշազանց: Ասոնք ընդունեցան զՄէլէակը երբ աշխարհք եկաւ: Ապոլոն, ըստ Պինդարեայ, խնդրեց անոնցմէ որ նպաստեն Եւադենայ երբ ծնաւ զՀիամուս: Փիլոստրատ նոյն բանը կըրտովի վրայ կը պատմէ, որ ներկայ գտնուեցաւ Պեղոպսի ծննդեան. և կատուլլոս կ'ըսէ թէ Արիլլեայ ծնունդն ասոնց ներկայութեամբ պատուեցաւ: Այսպէս այս աստուածուհիքն ծննդականն կանանց աղաւթութեան իբրեւ նպաստիչ կը համարուէին, որ այս բանիս համար օգնութեան կանչուած Լուկինանչատ անգամ ուրիշ բան չէր բայց այս Պարկաներէն մէկն: Ինչպէս նաև յԱթայիա զինքը Մանիլ կը կոչէին, և զոր 'հին բանաստեղծն Դելեայ՝ Լիւսիաս, 'ի պատիւ այս աստուածուհեաց երգի մը մէջ, անուանի և զօրաւոր Պարկայ մը կը կոչէ զանիկայ:

Ասոնք կը բնակէին, ըստ Որփէոսի,

խաւարամած այրի մը մէջ 'ի Տարտարոսի: Դժոխսպետն զանոնք պաշտօնեայ ըրաւ. և նոյն ինքն կ'անուանուի անոնց առաջնորդն, և Ողիմպիա իրեն չքեղ բազին մը նուիրեր էր այսու անուամբ: Ոլիգիոս բնակեցուց պալատի մը մէջ, ուր ամենայն մարդկան ճակատագիրքն գրուածալք են յերկաթ և 'ի պղինձ. այնպէս զի ոչ Արամազդայ կայծակն, ոչ աստեղաց շարժումն և ոչ բոլոր բնութեան յեղաշրջութիւնն կարենան ջնջել զնոսա: Փիլիստիայք, Պղատոն նաև, անոնց բնակութիւնը յերկինս կը դնեն լուսեղէն գնտից մէջ, յորս կան զգեցեալ սպիտակ պատմաճան աստեղացից, կրելով պաակս, նստեալ 'ի վերայ լուսափայլ աթոռոց, և կը խառնեն իրենց ձայնը համբարուաց երգոց հետ, ուսուցանելու մեզի թէ ինքեանք են որ կը պահեն այս զարմանալի ներդաշնակութիւնս, յորումէ տիեզերաց կարգն:

Շատ անգամ Պարկայք համոզիչ և ճարտարաբան ըլլալով, մխիթարեցին զՊերսեփոնէ զոր յափշտակեր էր Պղուտոն. իրենք հանգարտեցուցին Դեմետրեայ ցաւն, որ ունեցեր էր իր դստեր կորստեան համար. և երբոր Պղուտոն հափափեց այս վերջինս, իրենց աղաջանքովն եղաւ միայն որ ինքն հաւանեցաւ ելլելու Սիկիլիոյ այրէ մը յորում Պան գտաւ զինքը: Միշտ անփոփոխ իրենց խորհրդոց մէջ, այս հնարագէտ թելը կը բռնէին, նշանակ ընթացից կենաց: Ոչ ոք կարող էր զիրենք յուզելու և արդիւթ թեզանը կտրելու: Միայն Աղմետ եղաւ որ իրեն տունը ուրիշ մը դնելու կարողութիւն ստացաւ, երբոր իր կենաց վախճանը հասեր էր: Ըստ կըզդեայ, իրենք են տիրուհի ամենայն շնչաւորաց աշխարհի: « Իրենք են, կ'ըսէ Եսիորոս, որ մարդկան բարիք կամ չարիք կը բաշխեն. և որոնք կը հալածեն զյանցաւորս մինչև որ պատժուին »: Ուրիշ բանաստեղծք ալ ասոնց կարողութեան վրայ նմանօրինակ փայլուն գաղափարներ ունին: Մերթ կը խրախուսեն զանոնք մաննելու երջանիկ

օրեր անոնց համար որ Բաղդին սի-
րելի պիտի ըլլան. և մերթ իրենք կը
սահմանեն այն ժամանակն յորում
յերկրի պիտի բնակին: Դիպուածը
միշտ իրենց կանխասացութեանց ե-
տեէն գնաց: Երբեմն մեր ճակատա-
գրին մէկ մասը կը յայտնեն, մնացածն
անթափանցիկ քօղի մը տակ ծածկե-
լով. երբեմն զմարդիկ իրենց կը ծա-
ռայեցընեն յափշտակելու համար ա-
նոնց կեանքը որոնց ճակատագիրը լրա-
ցած էր, ինչպէս կ'ըսէ Վիրգիլիոս Հա-
լէսոսի վրայ խօսելու ժամանակ: Ոչ
միայն վրակեցողք են ծննդեան, ինչ-
պէս վերագոյն տեսանք, այլ և մինչ-
դեռ Հերմէս կը դարձընէր 'ի դժոխոց
զհողիս որ յետ բազում դարուց չըջա-
նի մը նոր մարմիններով պիտի կենդա-
նանային, Պարկայից յանձնուած էր տա-
նել առ լոյսն և հանել դուրս 'ի Տար-
տարոսէն այն զիւցազունքն՝ որոնք
յանդգներ էին հօն մտնել: Իրենք ե-
ղան իբրեւ առաջնորդք Բալքոսի, Հե-
րակլեայ, Քեսէոսի և Ողիսեայ. իրենք
բերին 'ի լոյս Պելլոսէոս, որ իշաւ 'ի դը-
ժոխս, ըստ Պինդարեայ. զԻսամփոնի-
թէս՝ որ ըստ աւանդելոյ Հերոդոտեայ,
հօն տապեղուլունով 'ի Եմետրեայ հետ
կը խաղար. զՍիրիէոս, որ յետոյ դրեց այս
ճանապարհորդութեան պատմութիւ-
նը. զԷնէաս, որ հօն գնաց զԱլքիսէս
տեսնելու: Հուսկ ուրեմն Պրուտոն իր
հարսն անոնց յանձնեց, երբոր ըստ պա-
տուիրելոյ Արամազդայ, ինքն կը դառ-
նար յերկինս իր մօրը քով վեց ամիս
անցընելու:

Պարկայը բուրդ կը մանէին, որոյ
դոյնն կը նշանակէր մահկանացուաց
բաղին 'ի ներքոյ անկեալ իւրեանց վը-
ճոց. սեն կը նշանակէր զկարծ և զտա-
րաբաղդ կեանս. սպիտակն զերկայն և
զերկանիկ կեանս: Լիկոփոն միայն ե-
ռագոյն թելեր կ'ընծայէ անոնց: Կղո-
տով կը բռնէր զաղեկատն (րօք). Լա-
քեսիս կը դարձընէր իրիկը, և Ատրո-
պոս, երեցունց մէջէն պառաւազոյնը,
կը կտրէր զթեկն մկրատով երբոր ժա-
մանակն հասնէր: Դիւցարանք այս գա-

ղափարներէն շատ չեն հեռանալ: Մար-
տինոս Գաբելլա զանոնք Բաղդին քար-
տուղարքը կ'ընէ. փուլկենտիոս, պաշ-
տօնեայս Պրուտոնի. փուրնուտոս, Արա-
մազդայ, և Տինք ընդհանրապէս, Բաղ-
դին: Հիծէն յունական արիարետին
քանի մը դրոց գիւտն ասոնց կ'ընծայէ,
այսինքն՝ A, B, Θ, T, I, Y: Յոյնք լուսնոյ
դնտին պահպանութիւնը Պարկայից
կու տային: Այս կարծիքն Եփիգենէս
փիլիսոփային էր, որ կը համարէր, ինչ-
պէս նաեւ Վոսիոս, թէ շատ անգամ
զանոնք եռաթիւ կը ներկայացընեն,
վասն զի այս մոլորակը նոր, լի, կամ
առանց պայծառութեան էր: Ասոնց
թիւն միշտ հանճարեղ այլաբանութիւն
մ'երեցաւ ժամանակին երեք բաժա-
նմանն: Այն որ կը մանէր՝ կը 'իկարէր
զներկայն, այն որ կը բռնէր՝ 'ի ձեռին
զմկրատն՝ կը ներկայացընէր զապա-
ղայն, և յետինն, որոյ աղեկատն կը
լնոյր, անցելոյն նշանն էր:

Յոյնք և Հռովմայեցիք մեծ պատիւ
ներ ընծայեցին Պարկայից, և յետ Ապո-
ղոնի՝ ընդհանրապէս ասոնց կ'աղեր-
սէին, վասն զի այն աստուածոյն պէս
զապառնին կը ներկայացընէին: Շինե-
ցին տաճարներ անոնց համար յՈլիմ-
պոս և 'ի Մեգարա. Աւելի հռչակաւոր
մ'ալ ունէին, բոլորովին բաց և խիտ
անտառի մը մէջ շինուած, ուր Սիսիփոն
և Տիտանայ ժողովուրդք ամեն օր ա-
նոնց զոհէր կը մատուցանէին: Վերջա-
պէս 'ի Սպարտա իրենց փառաւոր տա-
ճար մ'ընծայուած էր Որեստեսի շիր-
մին մօտ: Իրենց ամեն տարի սեաւ ոչ-
խարնբեր կը մորթէին, ինչպէս Կատա-
ղեայ, և բաց յայլ և այլ արարողու-
ղութեանց, քուրմը պարտական էին
ծաղկեայ պսակներ կրելու: Նոյնպէս
նաեւ իտալիոյ ժողովուրդք պաշտօն կը
մատուցանէին Պարկայից: Իրենք սե-
ղաններ ունեցան 'ի Հռովմ, 'ի Գոսկա-
նա և յաւաթ 'ի Վերոնա, և Կեղտը իբրեւ
Մայր աստուածուհին կը պատուէին
զանոնք:

Նախնիք կը ներկայացունէին զՊար-
կայս երեք կանանց կերպարանք, դա-

ժան և պառաւելալ երեսով, 'ի սպիտակ բրդոյ մեծ ապարօշով՝ խառն նարկիս ծաղկոյ պսակը 'ի գլուխս: Այլք կուտան իրենց ոսկի պսակներ. երբեմն պարզ երիզ մը կը չըլծապատէ անոնց զուլսը: Հազիւ երբեք քօղարկած կը հանդիւսանան, սակայն կորնխոսի տաճարին մէջ եղածներն այսպիսիք էին: Սպի-

տակ զգեստ մը ծիրանի եզերովը՝ լը ծածկէ անոնց մարմինը. մին ունի զմկրտան, միւսն գլխին և երրորդն զազեկաւան: Լիկոփրոն կ'ըսէ թէ կաղբ էին, և մատենագիրն երգի միոյ 'ի վերայ Հէրմսի, որ Հոմերի կը տրուի, թեալ կը հնարէ անոնց:

ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (1)

Ստեպ կ'ըսուի թէ Վենետիկոյ ժողովուրդն լրտեսներով, բանտերով և դահիճներով պաշարեալ ինքն իր ձայնէն կը դողար. և միւս կողմէն զայս ըսողներն կը մոռնան որ նոյն այս ժողովուրդս ինչ էր կատակաբանութեամբ և գիւտաւոր զուրջուածներով. ուրախ, զուարթ, անհոգ, զուարճասէր, որ կեանքը յաւիտենական բարեկենդանի մէջ կ'անցընէր: Ինչպէս կը միաբանին այս երկու հակասական դատաստաններն: Մենք ոչ ներբողեան կը գրենք և ոչ վիպասանութիւն, այլ պատմութիւն, և պատմութիւն մը որ պէտք չէ նոր երևնայ: Հորերուն մէջ, որոնք իրաւքնէ հոր չէին, չարագործք կը նետուէին. և ասոնք արդեաւ ուրիշ որ և իցէ տեղ լաւագոյն բանտ ունին: Տէրութեան յանցաւորներն կուպարք կոչուած բանտեր կը գրուէին, որոնք հիւղիկներ են՝ ոչ թէ անմիջապէս տանեաց կապարներուն տակ, այլ անկէ յարկ մը վար. անձուկը արդարև, բայց այնչափ որ կրնան փաղանդայի զուարճալի պատմութիւնները հնարաւոր ընել, իպիւն առիւծու բերաններ, սակայն ամբաստանութիւնը ստորագրեալ պիտի ըլլային, և անանունք չէին ընդունուեր, բայց միայն յօրինաց հաստատեալ պարագայից մէջ և շրջահաեցութեամբ, որոնք խստիւ կը պահուէին: Իպիւն լրտեսք, բայց Տէրու-

թիւնն որ զանոնք վարձեր էր, նաև կ'արհամարհէր. և հետեւելի օրինակով կը պահանջէր որ իրենց ըսածին ակնածելի վկայութիւններ յառաջ բերեն: Եւ քանի էին այս լրտեսներս, որոնք ամեն խօսք, ամեն շարժումաճք, և ռամկին ամեն հառաչանքը պիտի բռնէին և պիտի իմացընէին. քննենք միայն վերջին դարը, որուն յիշատակարանքն Տէրութեան ֆրնչաց Դիւանին մէջ կը պահուին: Կրտսէնիկոյ ասենադպիրն իրեն քանի մը Տեղեկոսքեանց մէջ կը գրէր որ յամին 1718 Տէրութեան մէջ կը նուազէին մտերիմք (այսինքն լրտեսք) և փափաքելի էր աճեցընել զանոնք: Ընդ ամենն երեք էին, այսինքն Ռինալտոյ Դարտինի, Պեռնարտին Կարպինոզի և Պիոնեա անուամբ մէկն, որոնք ըստ կանոնի՝ ամեն չորեքշաբթի սովորական թերթը կը բերէին: Իսկ թէ մըտերիմք կը նուազէին և չէին աճեր՝ 1764 և 1765 տարիներուն տեղեկութենէն յայտնի կ'իմացուի. « քաղաքին համար միայն Մանուչչի կը ծառայէր »: Արդ ուրեմն 'ի Վենետիկ լրտեսներու բանակ մը չկար, և Գերագոյն Ատենան դժուարաւ կը գտնէր այն անկեղծ ժողովրդեան մէջէն մէկն որ յանձն առնու, ինչպէս կ'ըսուէր այն ժամանակ, մտերիմ ըլլար Հետեանքն յայտնի էր. երեքն պէտք էին ամեն բան գիտնալ, և ամենաքիչ բան գիտէին. որով կրցան հաստատուիլ Ազատ Որմնագրաց